

Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

ՀԵՌԱԳԻՐ Ս. ԵԶՄԻԱԾՆԵՆ

Ամենայն Հայոց Վեհ. Տ. Տ. Գեորգ Սրբազանագոյն Կաթողիկոսը Ս. Էջմիածնէն իր մասնաւոր մէկ հեռագրովը, Նոր Տաւրոյ եւ Ս. Ծննդեան տօնին առթիւ կը շնորհակալուի եւ իր Հայրապետական բարձր սերն ու օրհնութիւնները կը դրկէ Գեորգ. Տեղապան Հօր, Պատ. Միաբանութեան եւ Համայն Պաղեսիոյ հաւատարմաց Հայ ժողովուրդին: Մագրելով բարգաւաճութիւն եւ յառաջդիմութիւն Միաբանութեան եւ Պաղեսիոյ հայ եկեղեցւոյ:

ԱՄՍՕՐԵԱՅ ԼՈՒՐԵՐ

* 4 Դեկտ. Բշ. — Ընծայումն Ս. Աստուածմանի երկը ամաց ի Տանաւն. Գլխաւորութեամբ Հօգ. Տ. Սուրէն Վրդ. Քէմանեանի, Հօգ. Վարդապետ Հայրեր հանդիսաւոր գնացքով իջան Գեթսեմանի Ս. Աստուածածնի Տանաւն: Հրաշափառի հանդիսաւոր մուտքէն ետք, Ս. Կոյսի Գերեզմանին վրայ պատարագեց Հօգ. Տ. Յակոբ Վրդ. Վարդանեան: Ընծայման խորհուրդին շուրջ քարոզեց Հօգ. Տ. Սուրէն Վրդ. Քէմանեան: Ժողովուրդի հոծ բաղամութիւն մը կը լեցնէր հնազարեան տանաւն: Յետ Ս. Պատարագի կատարուեցաւ Հօգեհանգատեան պաշտամունք Ս. Աստուածածնայ տաճարի բարերար՝ Կիւլապի Կիւլպէնկեանի եւ Կիւլպէնկեան գերդաստանի համայն ճնշեցեցեց հոգիներուն համար: Արարողութեանց աւարտին, վարդապետ հայրեր Նոյն հանդիսական գնացքով վերադարձան մայրաքաղաք:

* 9 Դեկտ. Եր. — Կէսօրէն առաջ Գեորգ. Տեղապան Հօր այցելեց Երուսաղէմի Բրիտանական Հիւպատոսը Վսեմ Սըր Հիւ Տաու ընկերակցութեամբ Հիւպատոս Վսեմ Ա. Ր. Ուալմալէի եւ զերհիւպատոս Պր. Էրօքի:

* 10 Դեկտ. Կիր. — Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ: Պատարագիչն էր Հօգ. Տ. Յարութիւն Վրդ. Մուշեան:

* 13 Դեկտ. Դշ. — Կէսօրէն առաջ Գեորգ. Տեղապան Հօր իր առաջին այցելութիւնը տուաւ Երուսաղէմի Լիբանանեան Նոր հիւպատոսը, իր օգնականին ընկերակցութեամբ:

* 15 Դեկտ. Ուր. — Երեկոյեան ժամերգութիւնն ու վաղուան տօնին նախատեսակը կատարուեցան Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ, նախապահութեամբ Գեորգ. Տեղապան Հօր:

* 16 Դեկտ. Եր. — Ս. Առաքելոց եւ Առաքին Լուսաւորչացն մերոց Թաղէտի եւ Բարթողիմէոսի. Հանդիսաւոր Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Գլխաւորի մատրան մէջ: Պատարագիչն էր Հօգ. Տ. Նորայր Վրդ. Պողոսեան:

— Կէսօրէն յետոյ Գեորգ. Տեղապան Հայրը, ընկերակցութեամբ Տ. Տ. Յարութիւն Վրդ. Ի. Գարեգին Արեղայի եւ հարտարապետ ու նկարիչ Տիար Մարտիրոս Ալթունեանի փոխադարձ այցելութիւն տուաւ Ս. Քաղաքի Նոր Լիբանանեան հիւպատոսին:

— Նոյն օրը Հօգ. Տ. Սուրէն Վրդ. Քէմանեան ի զիմաց Գեորգ. Տեղապան Հօր, Ներկայ գտնուեցաւ յոյն կաթողիկոս պատրիարքարանէն սարքուած պաղարին պաշտօնական ընդունելութեան:

Այսօր իւրաքանչեւ վերադարձան Հօգ. Տ. Հայրիկ Վրդ. Ասլանեան եւ կալուածոց զիւանի քարտուղար Պր. Կարպիս Հինդեան, որոնք մեկնած էին Դեկտեմբեր 6ին Ս. Աթոռոյ կալուածական հարցերով զբաղելու:

* 17 Դեկտ. Կիր. — Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յարութեան Տանարի մեր վերնատան մատուռին մէջ: Պատարագիչն էր Հօգ. Տ. Յարութիւն Վրդ. Մուշեան:

* 20 Դեկտ. Դշ. — Գեորգ. Տեղապան Հայրը ընկերակցութեամբ Հօգ. Տ. Տ. Հայրիկ եւ Բարգէն Վարդապետաց մեկնեցաւ իւրայել, զբաղելու վանական - վարչական հարցերով:

* 21 Դեկտ. Եշ. — Երեկոյեան ժամերգութիւնը եւ վաղուան տօնին նախատեսակը կատարուեցան Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ, նախապահութեամբ Գեորգ. Տ. Սուրէն Վրդ. Քէմանեանի:

— Երեկոյեան Հալէպէն Ս. Աթոռ ժամանեց Հօգ. Տ. Ասողիկ Վրդ. Ղազարեան:

* 22 Դեկտ. Ուր. — Յղութիւն Սուրբ Աստուածմանի ի յԱմենայն. — Հօգ. Տ. Սուրէն Վրդ. Քէմանեանի գլխաւորութեամբ, Միաբանութիւնը պաշտօնական երթով իջաւ Գեթսեմանի Ս. Աստուածածնայ տաճար: Հրաշափառով հանդիսաւոր մուտքէն ետք, Ս. Կոյսի գերեզմանին վրայ Ս. Պատարագը մատուցեց Հօգ. Տ. Գարեգին Արեղայ Գաղանճեան, իսկ Հօգ. Տ. Հայկանք Վրդ. Պարամեան քարոզեց Ս. Կոյսի սրբութեան եւ իսկական մայրութեան գաղափարին շուրջ:

* 24 Դեկտ. Կիր. — Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ: Պատարագիչն էր Հօգ. Տ. Պարգե Վրդ. Վրթանէսեան:

* 26 Դեկտ. Դշ. — Երեկոյեան Ս. Ծննդեան տօնին առթիւ, Գեորգ. Տեղապան Հայրը ընկերակցութեամբ հօգեհանքի վարդապետներու, շնորհաւորական այցելութիւն տուաւ Ֆրանչիսկեան Միաբանութեան Գեորգ. Կիւսթոսին եւ Անկլիթան Գեորգ. Նպիոկոպոսին:

— Ի զիմաց Գեորգ. Տեղապան Հօր, Հօգ. Տ. Սուրէն Վրդ. Քէմանեան, ընկերակցութեամբ հօգեհանքի վարդապետներու շնորհաւորական այցելութիւն տուաւ Յոյն Հռոմէականներու Հօգ.

Հովիւին, Մարտիթ համայնքի եպիսկոպոսին և Հայ Հռոմէականներու Հոգ. Հովիւին:

* 28 Դեկտ. Եջ. — Գեր. Տեղապահ Հայրը ընկերակցութեամբ Հոգ. Տ. Գարեգին Արք. Գաղանձեանի և քարտուղար Պր. Կարպիս Հինդլեանի Ս. Իննդեան շնորհաւորական այցելութիւն տուաւ տեղւոյս բրիտանական Վսեմ Հիւպատոսին, և լուսերականներու ներկայացուցիչներ Տք. Մօլին և Պր. Մելիքեանին:

Մասնաւոր կարգադրութեամբ, այս երեկոյ Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ, ի ներկայութեան Միաբանութեան և ժողովուրդի հոծ բազմութեան, կատարուեցաւ Եկեցեղ. եւ յաւելակապիքներ, Կիլիկիոյ Վեմ. Տ. Գարեգին Հայրապետի առաջնութեամբ համար: Նոյնպիսի աղօթքներ պիտի կրկնուին թէ Մայր Տաճարին և թէ բոլոր սրբաւորներուն մէջ, մինչև Վեմ. Հայրապետին կատարեալ ապաքինումը:

* 29 Դեկտ. Ուր. — Երեկոյեան ժամերգութիւնը և վաղուան տօնին նախատեսակը պաշտուեցան Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ նախագահութեամբ Հոգ. Տ. Սուրեն Վրդ. Քէմհանեանի:

* 30 Դեկտ. Եր. — Ս. Յակոբայ Մծքնայ Հայրապետին. — Հանդիսաւոր Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յակոբեանց Մայր Տաճարի Ս. Դիմաղորի մատրան մէջ, Պատարագիչն էր Հոգ. Տ. Յարութիւն Վրդ. Մուշեան:

* 31 Դեկտ. Կիր. — Ս. Պատարագը Ս. Յարութեան Տաճարի մեր վերնատան մատրան մէջ՝ մատոյց Հոգ. Տ. Նորայր Վրդ. Պողարեան:

— Այսօր Գահիրէէն Մայրավանք վերադարձաւ Հոգ. Տ. Հայկազուն Վրդ. Արքանամեան:

* 5 Յուն. Ուր. — Երեկոյեան ժամերգութիւնը և վաղուան տօնին մեծահանդէս նախատեսակը կատարուեցան Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ, նախագահութեամբ Գեր. Տեղապահ Հօր:

* 6 Յուն. Եր. — Ս. Գալիի Մարգարէին եւ Յակոբայ Տեառնեղայր արդար առաւելոյն. — Տօն Առաքելական Արքանայ Ս. Տրուսաղէմի. — Աստուածահօրն Գաւթի և Տրուսաղէմի եւ համայն Քրիստոնէական աշխարհի առաջին եպիսկոպոսապետին տօնը մայրավանքին մէջ կը կատարուի բացառիկ հանդիսութեամբ, անոր համար որ, Ս. Յակոբեանց Տաճարը հիմնուած է ճիշդ այն տեղւոյն վրայ ուր կը գտնուէր առաջին եպիսկոպոսապետին բնակարանը, ըստ այդ, Մայր Տաճարի դասին մէջ, մեր Պատարագական Աթոռին տեղը կը ցուցուի իբրեւ սրբազան այն վայրը՝ ուր աստատուած էր նաև Քրիստոնէական Եկեղեցւոյ առաջին պետին՝ Յակոբոս Տեառնեղբոր աթոռը(*): Իսկ Տեառնեղբոր

իրեւ զերեզման արժանահատ աւանդութիւններ կը մատնանէին Մայր Տաճարի Աւագ Խորանին ներքնամասը: Միշտակին արդէն իսկ տաճարը իր ամբողջական զարդարանքով և աւելի քան 500 արծաթ կանթեղներու և բիւրեղեայ ջահերու լուսավառութեամբ պատրաստ է չքեղ տօնակատարութեանը մայրավանքի մեծ սուրբին և Քրիստոնէայ անդրանիկ եպիսկոպոսին: Յետ առաւտեան ժամերգութեան որ կատարուեցաւ նախագահութեամբ Գեր. Տեղապահ Հօր և մասնակցութեամբ բովանդակ Միաբանութեան, հանդիսաւոր Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Աւագ Խորանին — Տեառնեղբոր Գերեզմանին — վրայ: Պատարագիչն էր Հոգ. Տ. Սուրեն Վրդ. Քէմհանեան, որ քարոզեց նաև օրուան տօնին խորհուրդին շուրջ ու մաղթանքներ ըրաւ Ս. Աթոռոյ և բովանդակ Հայց. Եկեղեցւոյ պայծառութեան համար: Յետ Ս. Պատարագի կատարուեցաւ Հոգեհանգստեան հանդիսաւոր պաշտամունք Ս. Աթոռոյս բոլոր հանգուցեալ պատրիարքաց հոգիներուն համար:

* 7 Յուն. Կիր. — Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Հրեշտակապետաց Եկեղեցւոյն մէջ, պատարագիչն էր Հոգ. Տ. Հայկազուն Վրդ. Արքանամեան: Ս. Պատարագի ընթացքին Հաղորդ-

չի՝ կրնար ըլլալ ոչ Ս. Աւետարանը ոչ Եկեղեցւոյ արժանահատ աւանդութիւնը: Մինչ Տեառնեղբոր Երուսաղէմի Աթոռը իբրև Քրիստոնէական առաջին Աթոռ և եպիսկոպոսապետութիւն, առայդ իրեն յենարան ունի ոչ միայն Երուսաղէմի Եկեղեցւոյն արժանահատ աւանդութիւնը այլ մանաւանդ Ս. Գրքէն Գործ Առաքելոցի ստուգապատու վկայութիւնը, ուր ոչ թէ Պետրոսը այլ Յակոբոսը կը գտնենք իբրև առաջին եպիսկոպոս քրիստոնէական անդրանիկ Եկեղեցւոյն: Երուսաղէմի Հայոց Պատրիարքական Աթոռը ոչ միայն ուշիւղ չարունակութիւնն է Տեառնեղբոր Առաքելական Աթոռին, այլ մանաւանդ սեպհականատէրը թանկագին այն Սրբատեղեցւոյն որ եղած է քրիստոնէական առաջին եպիսկոպոսապետին բնակավայրն ու աթոռանիստը:

Սակայն Հայաստանեայց Ս. Եկեղեցիէն ներս երբեք տեղ չեն կրնար գտնել քրիստոնէական Եկեղեցիներու միութիւնն ու խաղաղութիւնը վրդովող անհարկի ու հակաքրիստոնէական յաւակնութիւններ, որովհետեւ հոն մարդկային հաշիւներէն ու սին փառասիրութիւնէն աւելի իրազորուած ու տիրական են մինչև այսօր ալ Աստուածային սրբաբար սկզբունքները ու մանաւանդ Քրիստոսի այն սէրը, որուն խմբումին մէջ սրբուած իրենց բոլոր մարդկային տկարութիւններէն, հուսադաւաճ եղբայրացան առաքեալները, ու պէտք է եղբայրանան անխտիր բոլոր առաքելական Եկեղեցիները, իրազորութւլով գերազոյն այն ամբողջութիւնը ուր գլուխը ինքն է Քրիստոսը, և ուր ըստ առաքեալի բացատրութեան չի կրնար ըլլալ տէր ու ծառայ, այլ ամենեքեան մի ի Յիսուս Քրիստոս:

(*) Եթէ Հայաստանեայց Ս. Եկեղեցին ուղէր սնուցանել Պապական Եկեղեցիին նման նախաթոռութեան սկզբունքներ, յանձին Երուսաղէմի Հայ Պատրիարքութեան, ունեցած պիտի ըլլար շատ աւելի հիմնական ու զօրաւոր փառս մը, քան Հռոմէականներու բոլոր այն յերկրամոյ փաստարկութիւնները, որոնց յենակէտը չէ՝ և

ուեցան Ս. Թարգմանչաց մանկապարտէզի ամբողջ աշակերտութիւնը:

Երեկոյեան ժամերգութիւնը և վաղուան տօնին նախատօնակը պաշտուեցան Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ, նախագահութեամբ Գեր. Տեղապահ հոր:

✽ 8 Յուն. Բշ. — Ս. Ասեկիանոսի նախասարկաւոյն. — Այսօր ըլլալով նաև տօնը Ս. Աթոռոյ բարեկենդիւ սարկաւազներուն և ուրաւակիրներուն, առաւօտեան ժամերգութեան ընթացքին կատարուեցաւ նաև անոնց յատուկ հանդիսութիւն մը: Բարեկենդիւ սարկաւազներ և ուրաւակիրներ մարգարտադարձ թագերով, արծաթազամ կարմիր Շապիկներով և ուրաւներով, լուցեալ տապանակներ և բուրվառներ ի ձեռին, կատարեցին առաւօտեան ժամերգութեան վերջին բաժինը Վփառք ի բարձունս» — էն մինչև Ս. պատարագի սկիզբը: Իսկ Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի յարակից Ս. Ստեփաննոսի մատրան մէջ, պատարագիչն էր Լոգ. Տ. Պարգե վրդ. Վրթանէսեան:

Յետ Ս. Պատարագի Գեր. Տեղապահ Լայրը ընկերակցութեամբ հոգ. վարդապետ Լայրերու, Յունաց Ս. Ծննդեան տօնին առթիւ, շնորհաւորական այցելութիւն տուաւ Յունաց պատրիարքարան, և ընդունուեցաւ Գեր. փոխմետրդէն, Գեր. եպիսկոպոսներէն ու Սինոդի հոգ. անդամներէն, իսկ ի զիմաց Գեր. Տեղապահ Լոգ. Լոգ. Տ. Սուրէն վրդ. Քէմանճեան ընկերակցութեամբ հոգ. վարդապետներու Ս. Ծննդեան շնորհաւորական այցելութիւն տուաւ Ասորոց հոգ. Տեսչին, Դպտոց Գեր. եպիսկոպոսին և Լապէշներու հոգ. Տեսչին:

Երեկոյեան ժամերգութիւնը և վաղուան տօնին նախատօնակը՝ պաշտուեցան Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ, նախագահութեամբ Լոգ. Տ. Սուրէն վրդ. Քէմանճեանի:

✽ 9 Յուն. Դշ. — Ս. Առաքելոց Պետրոսի եւ Պողոսի. — Ս. պատարագը մատուցուեցաւ Ս. Յակոբեանց Մայր Տաճարի՝ Ս. Պողոսի և Պետրոսի վերնայարկ մատուռներուն մէջ: Պատարագիչն էր հոգ. Տ. Ասողիկ վրդ. Դադաբեան: Ս. Պատարագի ընթացքին Լաղորդուեցաւ Ս. Թարգմանչաց նախակրթարանի երկսեռ աշակերտութիւնը:

✽ 10 Յուն. Դշ. — Երեկոյեան ժամերգութիւնը և վաղուան տօնին մեծահանդէս նախատօնակը պաշտուեցան Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ, նախագահութեամբ Գեր. Տեղապահ Լոգ.:

✽ 11 Յուն. Եշ. — Ս. Որդոցն Որոման Յակոբոս Գլխապիւր Լաւաքիոյն եւ Յովնանու Աստուածաբան Աւետարանի: — Ինչպէս Տեառնեղբոր տօնը, այսօրուան տօնը եւս Ս. Յակոբեանց Մայր Տաճարին յատուկ է, անոր համար որ Ս. Յակոբ առաքեալը մէկն է այն երկու Յակոբներէն (Տեառնեղբայր և Գլխապիւր) որոնց անունով կը կոչուի Մայր Տաճարը, և որուն Սրբանեալ զբլուխը Թաղուած է Տաճարին աջակողմը յատուկ մատուռի մը մէջ: Առաւօտեան ժամերգութեան յետոյ մատուցուեցաւ հանդիսաւոր Ս. Պատարագ, պատարագիչն էր Գեր. Տեղապահ Լայրը:

Իրեն կը սպասարկէին հոգ. վարդապետ հայրեր սարկաւազական զգեստաւորումով: Յետ Ս. պատարագի կատարուեցաւ մեծահանդէս թափօր, նախագահութեամբ Գեր. Տեղապահ Լոգ. որ ի ձեռին ունէր Ս. Խաչատրայտի թանկագին ճահնչազեղ մատուքը: Թափօրը Մայր Տաճարի մէջ յետ երիցս դարձման, կանգ առաւ կեդրոնական առեանին մէջ, ուր երգուեցաւ «Տէր ողորմեա» վարդապետ հայրերու և աշակերտ-զպիրներու փոխադարձ երգասացութեամբ: Օրուան շատ տպաւորիչ այս արարողութիւնը վերջ գտաւ Գեր. Տեղապահ Լոգ. պահպանիչով, որմէ յետոյ միաբանութիւն և ժողովուրդ թափօրով բարձրացան պատրիարքարան, ուր Տեղապահ Լայրը՝ օրհնութեան իր խօսքերէն յետոյ բաժնեց Ս. պատարագի նշխարներ Միաբանութեան և համայն հաւատացեալներուն:

✽ 14 Յուն. Կիր. — Նոր Տարի (ըստ հին տօմարի) Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ, պատարագիչն էր — ըստ ընկալեալ սովորութեան Մայր Տաճարի ժամօրհնողը — Լոգ. Տ. Պարգե վրդ. Վրթանէսեան: Յետ Ս. Պատարագի միաբանութիւն և ժողովուրդ բարձրացան պատրիարքարան, ուր Գեր. Տեղապահ Լայրը իր Նոր Տարւոյ շնորհաւորական խօսքերէն և օրհնութենէն ետք, ըստ աւանդական սովորութեան բաժնեց Ս. երկրի բերքն եղող նարինջը բոլոր ներկաներուն:

✽ 18 Յուն. Եշ. — Զրադալոյց Ս. Ծննդեան. — Առաւօտեան ժամը 9-ին նախագահութեամբ Գեր. Տեղապահ Լոգ. վարդապետ Լայրեր հանդիսաւոր գնացքով, Ե. Լ. Բարեսիւրական, Լ. Ե. Մ. և Լ. Մ. Բ. Մ.-ի արիներուն և ոստիկանական ջոկատի մը առաջնորդութեամբ իջան Ս. Աստուածածնայ դուռը, ուրկէ անդին թափօրը 10 ինքնաշարժերու շարանով մը համարայ ելաւ զէպի Բեթլեհէմ: Ծամբու կիսուն, Յունական Ս. Թէոդոսի վանքին առջև թափօրը զիմաւորուեցաւ Բեթլեհէմի Լայն Գաղուքի անդամներէն, Լայն, Յոյն, Լատին և Ասորի Լամայնքներու Մուխթարներէն, և հեծելաւոր ոստիկաններու ջոկատէ մը: Թափօրը երբ հասաւ Լոփուաց Դաշտի մօտ Պէյթ-Սահուր գիւղը, զիմաւորուեցաւ տեղւոյն գիւղապետէն, Յունադաւան Արարներու հոգ. Տեսչէն, և գիւղացիներու բազմութենէ մը: Գեր. Տեղապահ և Միաբանութիւնը հիւրասիրուեցան տեղւոյն կառավարչատան մէջ, ուր կատարուեցան նաև պատշաճ ճառախօսութիւններ զիւրի ներկայացուցիչներուն կողմէ, որոնց բոլորին հուսկ յետոյ փոխադարձեց Գեր. Տեղապահ Լայրը իր խօսքովը: Ապա թափօրը մեծ փառաւորութեամբ աւելի քան 20 ինքնաշարժերու և հեծելազօրքերու շարանով մը մուտք գործեց Քրիստոսի Ծննդեան Ս. Քաղաքը Բեթլեհէմ: Քաղաքին մեծ հրապարակը, Ս. Ծննդեան եկեղեցւոյ զաւթը մինչև տանիքներ լեցուած էին Լայն և օտարազգի ծովածաւալ բազմութեամբ, և ի պատուի կեցած ոստիկաններու շարաններով, Լոն Գեր. Տեղապահ Լայրը զիմաւորուեցաւ Բեթլեհէմի վսեմ, կառավարիչին և կա-

առվարական պաշտօնեաներէն, Բեթղեմէմի մեր վանքի Հոգ. Տեաչէն և սքեմաւոր զպիւրներէն և Հ. Ս. Բ. Մ. ի Բարեսիրացի և Հ. Ե. Մ. ի Սկաւառներէն: Ասոնք բոլորը հոգ. վարդապետներու հետ և Գեր. Տեղապահ Հօր և Գեր. Ռուբէն Ս. Արք. ի զխաւարութեամբ թափօր կազմած, շիրտ հոգեղ Մեծնի երգեցողութեամբ, մեծ հրապարակէն բարձրացան մեր վանքը: Տաճարի Հայապատկան զանգակները, որոնք ըստ սովորութեան առաւելուն է լինել կը զօղանէին այս պահուն կ'ստանան ջերմ ոգեւորութիւն, արձագանգելով թափօրականներն ու ժողովուրդը լեցնող հոգեւոր խանդին: Ամէն Հայրս սիրտ կ'ուռնի այս պահուն, ի տես այն մեծ ու բացառիկ փառաւորութեան որ մեր ժողովուրդինն է սա պահուն, Քրիստոնէական այս ամենէն նուիրական սրբալոյսին մէջ: Թափօրը կանգ կ'առնէ մեր վանքի բակին մէջ, ուր Գեր. Տեղապահ Հայրը կ'արձակէ բոլորը պահպանելով և օրհնութեամբ:

8. Մ. ժամը 1.30ին Ս. Եննիգեան զանգերը զարնէալ կը սկսին զօղանել ու ժամը 1. մ. 2ին վարդապետ Հայրեր զխաւարութեամբ Գեր. Տ. Ռուբէն Ս. Արք. Մանասեանի, հանդիսաւորապէս կ'իջնան Ս. Եննիգեան եկեղեցին, որուն Սիւնազարդ գաւթին մէջ կը զմաւորուն զգեստաւորեալ թափօրականներէ: Հրաշափառ արարողութեամբ թափօրը կը յառաջանայ դէպի Ս. Եննիգեան Այլը ուր Գեր. թափօրապետը և հոգ. վարդապետներ կատարելէ յետոյ իրենց ուխտը, կը բարձրանան Ս. Եննիգեան եկեղեցւոյն հայապատկան բաժինը^(*), Հոն կատարուեցաւ ձրազալոյցի արարողութեան առաջին բաժինը մինչև Ս. պատարագ, իսկ Ս. Պատարագը մատուցուեցաւ Քրիստոսի Ս. Եննիգեան Այլին մէջ: Պատարագ էր Հոգ. Տ. Գարեգին արդ. Գաղանճեան: Յետ Ս. Պատարագի կատարուեցաւ նախատօնակ և ապա հանդիսաւոր թափօրով, վառեալ մօմեղինօք և հոգեւոր երգերու ցնծութեամբ թափօրականք և ժողովուրդը բարձրացան մեր վանքը, որուն բակին մէջ կատարուելէ յետոյ Ս. Եննիգեան Աւետարանի ընթերցումն ու Փառք ի Բարձունս՝ ի երգեցողութիւնը փակուեցաւ Ս. Եննիգեան արարողութեանց ձրազալոյցի բաժինը:

(*) Ս. Եննիգեան բուն եկեղեցին Հայ և Յոյն պատրիարքութեանց սեփականութիւնն է միայն: Իսկ Հռոմէական եկեղեցին, Տաճարէն ներս ունի մի միայն կարգ մը պղտիկ առանձնաշնորհումներ: Պարագայ մըն է որ Հայց. եկեղեցւոյ բոլոր լուսաւորչածին զաւակներուն բերկրանքի ու հպարտութեան առիթ կրնայ ըլլալ միայն: Երուսաղէմի արքայականներէն ներս Ս. Յակոբեանց միաբանութիւնը տեղագրին աշխատանքով և մեծ զոհարբութիւններով կրցած է մեր ժողովուրդին համար ապահովել այնպիսի պատուաւոր դիրք մը, որուն չեն կրցած հասնիլ մեզմէ բիրապատիկ զօրաւոր եկեղեցիներ հակառակ իրենց առատ միջոցներուն ու լարուած աշխատանքին:

Երեկոյեան վանքի ճաշասրահին մէջ սեղան տրուեցաւ միաբանութեան և ամբողջ ժողովուրդին:

Գիշերային ժամը 10ին սկսան Ս. Եննիգեան արարողութեանց բաժինը: Առաւօտեան ժամերգութիւնը մինչև Յորհնեցէք զՏէրի մասը պաշտուեցաւ Ս. Եննիգեան Տաճարի Հայկական բաժնին մէջ, իսկ մնացեալ մասը Ս. Եննիգեան այլին մէջ: Արարողութեանց Ս. Այլի բաժինը ձայնասփռուեցաւ Սիւնաքի Հայութեան որուն ընթացքին Գեր. Տ. Ռուբէն Ս. Արք. յանուն Գեր. Տեղապահ հօր և միաբանութեան՝ կարգաց Ս. Եննիգեան պատգամը ուղղուած համայն Հայց. եկեղեցւոյ բոլոր զաւակներուն Մայր Հայրենիքէն ներս թէ Սիւնաքի մէջ: Ապա Տաճարի մեր մասին մէջ մատուցուեցաւ Ս. Եննիգեան պատարագը, պատարագին էր հոգ. Տ. Պարգե վրդ. Վրթանէսեան: Յետ Ս. պատարագի կատարուեցաւ Զրօրհնեաց սրտաշարժ արարողութիւնը նախագահութեամբ Գեր. Տ. Ռուբէն Ս. Արք. իսկ հոգ. Տ. Հայկազուն վրդ. Արքայանեան քարոզեց Ս. Եննիգեան խորհուրդին շուրջ: Շիրտ հոգեղ մեծ և սքանչելի ընարանով:

Առաւօտեան ղէմ մատուցուեցաւ երրորդ Ս. պատարագը Քրիստոսի Ս. Եննիգեան Այլին մէջ: Պատարագին էր Գեր. Տ. Ռուբէն Ս. Արք. Մանասեան: Յետ Ս. Պատարագի, առաւօտեան ժամը 6ին ամբողջ միաբանութիւնը զգեստաւորեալ, թափօրով բարձրացաւ մեր վանքը, ուր Ս. Եննիգեան Աւետարանի ընթերցումով և Փառք ի բարձունսի՝ երգեցողութեամբ փակուեցան Ս. Եննիգեան սրտաուշ հանդիսութիւնները:

Միաբանութեան և ժողովուրդին տրուած Ս. Եննիգեան ճաշասեղանէն ետք, միաբանութիւնը զարնէալ տեղաւորուած ինքնաշարժերու երկար շարանի մը մէջ, սկստական և օտարականական ջոկատի մը ընկերակցութեամբ, երեկուան կարգով վերադարձաւ Երուսաղէմ — մայրաքաղաք —: Հայոց թաղի մուտքին սկստներ, զպիւրներ և միաբանութիւն, թափօր կազմած, շիրտ հոգեղ մեծնի երգեցողութեամբ խուներամ ժողովուրդի բազմութեան մէջէն մուտք գործեցին մայրաքաղաք ու բարձրացան պատրիարքարան ուր իրենց Ս. Եննիգեան շնորհաւորութիւնները ներկայացուցին Գեր. Տեղապահ հօր:

— Իսկ Երուսաղէմի մէջ Ս. Եննիգեան ձրազալոյցի արարողութիւնը կատարուեցաւ Ս. Յարութեան տաճարին մէջ, Քրիստոսի Ս. Գերեղմանին վրայ, ի ներկայութեան հաւատացեալներու խուռն բազմութեան մը:

Ասկէ առաջ Երուսաղէմի մէջ Ս. Եննիգեան ձրազալոյցի արարողութիւնը կը կատարուէր Ս. Հրեշտակապետաց եկեղեցւոյն մէջ, իսկ Ս. Յարութեան մէջ տեղւոյն ժամարարներն ու միաբան եղբայրները առանձինն կը կատարէին Ս. Եննիգեան ձրազալոյցը, նուազ հանդիսաւորութեամբ: Երեք տարիներէ ի վեր բարեղէպ կարգադրութեամբ մը Ս. Եննիգեան ձրազալոյցը պաշտօնապէս կը կատարուի Ս. Յարութեան Տաճարին մէջ, ի ներկայութեան եկեղեցականներու

և ժողովուրդի ստուար բազմութեան մը: Կարգադրութիւն մը, որով շատ աւելի վայելչութիւն ու հանդիսաւորութիւն տրուած եղաւ միջնադարին Սրբաւայրի մը մէջ կատարուած այս հանդիսութեան: Աղուօր զուգադիպութիւն մը նաև այս առթիւ որ մեր Ս. Թննդեան տօնին Քրիստոսի Տնօրինական Սրբաւայրերէն ամենէն զխաւոր երկուքը՝ Ս. Թննդեան Այրն ու Ս. Գերեզմանը մեր կողմէն գրաւուած կ'ըլլան պատշաճ հանդիսութեամբ:

Ս. Գերեզմանի ձրադաշտոյցի Ս. Պատարագը մատուցող Հոգ. Տ. Նորայր Վրդ. Պողարեան, իսկ յետ Ս. Պատարագի կատարուեցաւ նախատեսակ որմէ ետք Քրիստոսի Ս. Գերեզմանին շուրջանակի թափօրով, Տաճարի մեր տեղաբանին մէջ փախուեցաւ արարողութիւնը Ս. Թննդեան Աւետարանով և «Փառք ի բարձունս» ի երգեցողութեամբ:

Ս. Թննդեան արարողութիւնները կատարուեցան Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ, ուր յետ առաւօտեան ժամերգութեան հանդիսաւոր Ս. Պատարագը մատուցող Ս. Լրեշտակապետաց վանուց Հոգ. Տեառնը Տ. Սուրեն Վրդ. Քէմհանեան, յետ Ս. Պատարագի կատարելով նաև «Ջրօրհնաց» արարողութիւնը, իսկ Հոգ. Տ. Հայկապետ Վրդ. Պայրամեան քարոզեց Ս. Թննդեան խորհուրդին շուրջ, «Երկինք չէին բաւական փառաց անմահ արքային, ի խնձարուրս պատեցաւ» (Շարական) քնարանով:

Թէ երէկ և թէ այսօր Երուսաղէմի մէջ ըստ հնաւանդ սովորութեան երգեցողութիւնները կատարեցին Երուսաղէմահայ ազգայիններ:

Երեկոյեան տեղի ունեցաւ ժամերգութիւն և Ս. Թննդեան յետագայ օրերուն յատուկ նախատեսակի հանդիսութիւնը Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ, Այս հանդիսութիւնները շարունակուեցան մինչև Ութօրէք:

* 20 Յուն. Եր. — Մեղեղոյ. — Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ, Հնաւանդ սովորութեան համաձայն, որունս պատարագին էր վանուցս Աւագ Թարգման Հոգ. Տ. Հայրիկ Վրդ. Աւանեսան:

Յետ Ս. Պատարագի, մեր Ս. Թննդեան տօնին առթիւ, Պատրիարքարան շնորհաւորական այցելութեան եկան հետզհետէ Յունաց Գեր. Պատրիարքական Փոխանորդը, ընկերակցութեամբ Գեր. Եպիսկոպոսներու, Հոգ. Վարդապետներու և Սարկաւազներու. Լատինաց Ս. Պատրիարքը՝ Ամեն. Աւգերթոյ Կորի, ընկերակցութեամբ իր Փոխանորդ Գեր. Եպիսկոպոսին և Հոգ. Վարդապետներու. Ֆրանչիսկեանց Կիւսթոսը՝ Գեր. Զ. Դիաչինթօ Ֆաչչիօ, ընկերակցութեամբ Հոգ. Վարդապետներու. Ասորէոց, Ղպտոց, Մարոնիներու, Հապէշներու, Անկիթեաններու, Հայ Հռոմէականներու, Յոյն Հռոմէականներու, Գեր. Տեսուչները, ընկերակցութեամբ իրենց վարդապետներուն. Սանմանային դրասենեակի քարտուղարը, ոստիկանական սպայախումբատի Գեկ, Նատիմ Գեկ և Խէյրալլահ Գեկ:

Առնք բոլորն ալ ընդունուեցան Գեր. Տե-

ղապահ Հայրէն, որ իրեն առնթրեալայ ունէր Գեր. Տ. Ռուբէն Ս. Արքեպիսկոպոսը և Հոգ. Վարդապետ Հայրեր: Անոնք հիւրասիրուեցան Պատրիարքանի մեծ դահլիճին մէջ, Ս. Երկրին յատուկ աւանդական կարգերու համաձայն:

* 21 Յուն. Կիր. — Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յարութեան Տաճարի մեր վերնաշարի մատրան մէջ, Պատարագեց Հոգ. Տ. Ասողիկ Վրդ. Ղազարեան, որ նաև քարոզեց Քրիստոսի Ս. Թննդեան շուրջ:

— Այսօր իօրայէէն վերադարձաւ Հոգ. Տ. Յարութիւն Վրդ. Մուշեան, Հոգեշնորհ Հայրը որ իօրայէլ մեկնած էր ամսոյս 12ին, Գեր. Տեղապահ Հօր կողմէ՝ Յօպպէի և Հայֆայի մէջ Ս. Թննդեան տօնին առթիւ Ս. Պատարագ մատուցանելու, և հոգեւորապէս մխիթարելու տեղւոյն Հայաստանեայց Եկեղեցւոյ հարազատները:

* 22 Յուն. Բշ. — Այսօր կէսօրէն վերջ Գեր. Տեղապահ Հայրը, ընկերակցութեամբ քարտուղար Պր. Կարպիս Հինդլեանի, այցելեց Ամերիկեան Վսեմ. Հիւպատոսին, և ապա ներկայ եղաւ Լուտերականներու Միացեալ Նահանգաց ընդհ. ներկայացուցիչ Տօքթ. Ֆրանքլին Ֆրայի գալըստեան առթիւ սարքուած ընդունելութեան, Լուտերականներու հովուատան մէջ:

* 25 Յուն. Եշ. — Երեկոյեան ժամերգութիւնը և վաղուան տօնին նախատեսուող կատարուեցան Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ, նախագահութեամբ Գեր. Տ. Ռուբէն Ս. Արքեպս. Մանասեանի:

* 26 Յուն. Ուր. — Տօն Անուանկոչութեան Տեառն Մեղոյ Յիսուսի Բրիսուսի: Մայր Տաճարի առաւօտեան ժամերգութիւնէն յետոյ, Գեր. Տ. Ռուբէն Ս. Արքեպս. Մանասեանի զխաւորութեամբ, Հոգ. Վարդապետ Հայրեր հանդիսաւոր թափօրով իջան Ս. Յարութեան Տաճար, Մուսքին կազմուեցաւ «Հրաշափառ» թափօրը, որ յառաջացաւ դէպի Փրիշլին Ս. Գերեզմանը Ուխտի արարողութեան յետոյ, թափօրը Ս. Գերեզմանին շուրջանակի անցաւ մեր Տեսարանը:

Ապա Քրիստոսի Ս. Գերեզմանին վրայ մատուցուեցաւ հանդիսաւոր Ս. Պատարագ: Պատարագեց Գեր. Տ. Ռուբէն Ս. Արքեպս. Մանասեան: Գեր. Արքազանը նաև քարոզեց, քնարան ունենալով՝ «Եւսոյ յայտնեցաւ հեթանոսաց և փառք ժողովրդեան իօրայէլի»:

Յետ Ս. Պատարագի, դարձեալ պաշտօնական թափօրով, վարդապետ հայրեր վերադարձան մայրավանք: Հայոց թաղի մուտքին՝ կազմուեցաւ եկեղեցական թափօր, որ հոգեւոր շարականներու երգեցողութեամբ մուտք գործեց մայրավանք ու բարձրացաւ Պատրիարքարան, ուր կատարուեցաւ վանուցս աւանդական տնօրհնէքը: Նոյն արարողութիւնը կրկնուեցաւ վանքի մասնատան, հաշարանին, փառատան և խոհանոցին մէջ, ուր ի միի ալ յոյց օրհնուեցաւ նաև օրուան տօնին յատուկ հայկական հերթայի ճաշը:

— Երեկոյեան ժամերգութիւնը և վաղուան տօնին նախատեսուող կատարուեցան Ս. Յակոբի

եանց Մայր Տաճարին մէջ, նախագահութեամբ
Հոգ. Տ. Սուրէն Վրդ. Քէմհանեանի:

* 27 Յուն. Շր. — Տօն Եննդեան Ս. Յովնանեոս
կաթալեթին: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս.
Յակոբեանց Մայր Տաճարի Ս. Կարապետի խորա-
նին վրայ: Պատարագիչն էր Հոգ. Տ. Յակոբ Վրդ.
Վարդանեան:

* 28 Յուն. Կիր. — Ս. Պատարագը մատուց-
ուեցաւ Ս. Յակոբեանց Մայր Տաճարին Ս. Աս-
տուածածնի խորանին վրայ: Պատարագիչն էր
Հոգ. Տ. Յարութիւն Վրդ. Մուշեան:

* 29 Յուն. Բշ. — Այսօր Գեր. Տեղապահ
Հայրը, որ անցեալ Զորեքչարթի (24 Յունուար)
վանական գործերով մեկնած էր իսրայէլ, վերա-
դարձաւ մայրավանք:

Ս. ԵՆՆԳԵԱՆ ՈՒՆՏԱՒՈՐՆԵՐ ԻՍՐԱԵԼԻՆ

18 Յունուար, Հինգչարթի առաւօտեան ժամը
8:30ին, իսրայէլէն Ս. Աթոռ ժամանեց 115 աղ-
ջայիներու ուխտաւորական կարաւանը: Սահ-
մանադրութիւն վրայ անոնք զիմաւորուեցան ի-
րենց ազգականներու և զանազան ազգայիներ-
ու և ոճ բազմութենէ մը: Անոնք մասնակցեցան
Ս. Եննգեան մեր սրտատուչ արարողութիւննե-
րուն, վայելելով հոգեկան մխիթարութիւն, և
անոնցմէ շատեր ստացան Ս. Հաղորդութիւն:
24 ժամերու արտօնութեամբ միայն եկած ըլլա-
լով, յաջորդ օրն իսկ անոնք վերադարձան իս-
րայէլ: Մեր բոլորին համար խորունկ գոհունա-
կութեան պատճառ մը եղաւ այն՝ որ բոլորն ալ
իրենց բնակավայրին մէջ կրցած են, ինք-
զինքնին տնտեսապէս բաւարարել ու ցարդ
խեղճ չեն մնացած: Այս առթիւ կ'արժէ յիշել որ
իսրայէլի երկու հայաբնակ կեդրոններուն մէջ,
Եաֆա և Հայֆա, ունինք Եկեղեցի և վանք, և
երկու հոգևոր Հովիւներ, Հոգ. Տ. Բարդէն Վրդ.
Ապատեան (Եաֆա) և Հոգ. Տ. Տրդատ Վրդ. Պէր-
պէրեան (Հայֆա): Իսկ նոր Երուսաղէմի մէջ ու-
նինք առժամայ վայելուչ մատուռ մը (Պաքայի
նախկին գերմանական Եկեղեցին), որ պարբե-
րաբար Ս. Պատարագ և արարողութիւն կը կա-
տարուի մայրավանքէն զրկուած վարդապետնե-
րու կողմէ: Իսկ իսրայէլաբնակ Հայութեան թիւը
հազարը կ'անցնի:

ՄԵՐ ՏՊԱՐԱՆԻՆ ՆՈՐ ԳՐԱԾԱՐԱՊԵՏԸ

Պատ. Տնօրէն Ժողովի որոշումով Ս. Աթոռայ Տպա-
րանի վարիչ, Գրաւարապետութեան պատշոնին կոչուե-
ցաւ Տիար Միքնա Կիրեղեան:

Տիար Կիրեղեան Պրաւայի նախնական եւնիմէ Հա-
յաքնակ զիւղէն, հանգուցեալ Տէր Կիրեղ Բանանայի
որդին, դաստիարակութիւնը ստացած է ձեռնոյն հայ-
կական վարժարանին մէջ: Տպարանական արհեստին
նետեւած է Կիլիկիայ ու ապա Լիբանանի մէջ եւ կազ-
մակերպած է կարգ մը Հաստատութիւններ սպարան-
ներ: Ու ապա հաստատուած Պաղատ, ուր երկուր տա-
րիներ ունեցած է իր անձնական տպարանը, որուն ար-
կածով փնացումէն յետոյ՝ անցած է Լիբանան ու Երու-
սաղէմ, ստանձնելու համար Ս. Աթոռայ Տպարանի
գրաւարապետի պատշոնը:

Նկարագրով բարեմամբ, եւ իր գործին մէջ քնդու-
նակ վարպետ, վստահ եմք որ օգտակար պիտի ըլլայ Ս.
Աթոռայ հրատարակչական մեր գործին, որուն նկատմամբ
առաջին իսկ օրէն ցոյց տուաւ փառով եւ նուիրում:

ՈՒՐԱՐԻ ՏԸԻԶՈՒԹԻՒՆ

18 Նոյեմբեր 1950, Շաբաթ երեկոյեան ժամերգու-
րեան, Գեր. Տեղապահ Հայր սբեմաւոր ուրաւակրու-
րեան աստիճան շնորհեց Տրդ. Յովսէփ Մամուրին:

Բարեգաղ իրացուն եկած է Եգիպտոսէն, կրօնա-
ւորելու փախալով: Ինձն է 1907-ին, Աղեմսանդիլի:
Նախնական կրթութիւնը առած է Ազգային Պողոսեան
վարժարանին մէջ, յետոյ յաճախած է անգլիական դպ-
րաց, եւ ապա կասաբեղագործած է իր ուսումը Անգլիա:
Գիտէ անգլերէն, ճրանգերէն, իսպաներէն եւ արաբերէն
լեզուներ:

Հմուտ, կիրք եւ բազմակողմանի երիտասարդ մըն է
նորընծան, եւ ապագային համար խոստումնալից ուժ մը,
եթէ Տէրը կամենայ: